ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Ա. Կ. ՋՐԱՂԱՅՊԱՆՅԱՆ

Նախասովետական Հայաստանը ագրարային երկիր էր՝ թույլ զարգացած արդյունաբերությամբ։ Ազգաբնակչության ինը տասներորդ մասի եկամուտները ստացվում էին գյուղատնտեսությունից։ Եղած արդյունաբերությունը, բացառությամբ պղնձի ձուլումից, մասամբ էլ գինու-կոնյակի արտադրությունից, գերազանցապես տնայնագործական բնույթ ուներ։ Բնորոշ է, որ 1913 թ. տվյալներով Հայաստանի ամբողջ արդյունաբերական արտադրանքի ավելի քան երկու երրորդը ընկնում էր մանր, տնայնագործական տիպի ձեռնարկությունների վրա։ Մնացած մասը կազմում էր այսպես կոչված խոշոր, կամ գենդային արդյունաբերության արտադրանքը։

Նախասովետական Հայաստանի արդյունաբերության քիչ թե շատ աչքի ընկնող երկու ճյուղերի՝ պղնձի և գինու-կոնյակի ձեռնարկությունները գտնվում էին օտարերկրյա և ռուս կապիտալիստների ձեռքին։ Ազգային կապիտալը արդյունաբերության մեջ ընդհանրապես թույլ էր. նա իր տեղը պղնձաձուլության ասպարեզում մրցության հետևանքով նույնիսկ զիջեց ֆրանսիական կապիտալին։

Արդյունաբերության զարգացումը Հայաստանի ուրույն պայմաններում, եթե հատկապես նկատի առնենք վառելիքի՝ քարածուխի, նավթի բացակայությունը, պահանջում էր խոշոր կապիտալ միջոցների նախնական ներդրում թեկուզ երկրի հիդրոէներգետիկ ռեսուրսների իրացման բնագավառում, որով նախադրյալներ կստեղծվեին արդյունահանող ու վերամշակող արդյունաբերության մի շարք ճյուղերի առաջացման համար։ Սակայն այդ միջոցներից հայ ազգային կապիտալը կամ զուրկ էր, կամ գերադասում էր իր արամագրության տակ եղած գումարները գործառնության մեջ դնել Հայաստանի սահմաններից դուրս։ Առևտրի ասպարեզում, նավթարդյունաբերության մեջ և այլուր ներդրած կապիտալի շրջանառությունը անհամեմատ արագ էր կատարվում, իսկ ստացվող շահույթը լինում էր մեծ և կատարած ծախսերը, փոխհատուցման տեսակետից, պակաս վտանգավոր։ Այս հանգամանքները առավել հրապուրիչ էին, քան ազգային ինդուստրիայի սաեղծումը։ Եվ հայ բուրժուազիան նախընտրում էր դրանք։ Պատահական չէ, որ դեռևս մինչսովետական շրջանում տեխնիկական ինտելիգենցիայի կողմից կատարած նախագծումները, հատկապես երկրի հիդրոէներգետիկ հարստությունների օգտագործման վերաբերյալ, մնացին սոսկ պատրանքներ։ 1913 թ. Հայաստանում գործում էին 10 փոքրիկ հիդրո և ջերմային էլեկտրակայաններ 3100 կիլովատ ընդհանուր կա-

ղությամբ, որոնց էլեկտրաէներգիայի տարեկան արտադրությունը կազմում էր 5100 հազար կիլովատ ժամ։ Այդ չափաղանց համեստ էներգետիկ բազայի վրա անհնարին էր արդյունաբերության լայն ծավալումը։

Նախասովետական Հայաստանի ամբողջ էկոնոմիկան, այդ թվում և արդյունաբերությունը, իր վրա կրում էր գաղութային տնտեսության կնիքը։ Բացակայում էր խոշոր վերամշակող արդյունաբերությունը։ Մեքենաշինության մասին խոսք անգամ չէր կարող լինել։ Ահա ինչու պղինձն ու գյուղատնտեսական ծագում ունեցող մի շարք նյութեր տեղում չէին վերամշակվում գործածության համար պիտանի արտադրանքի, այլ հիմնականում արտահանվում էին ցարական Ռուսաստանի կենտրոնական մարզերը։ Այսպիսով, չկար արդյունահանող և վերամշակող ճյուղերի կապակցված, կոմպլեքսային զարգացում։

Թույլ էր նախասովետական Հայաստանի արդյունաբերության տեխնիկական հագեցվածությունը։ Նույնիսկ լեռնահանքային ձեռնարկություններում, օրինակ, պղնձաքարի հանույթի ասպարեզում, մեքենաների բացակայության հետևանքով տիրապետում էր ձեռքի ծանր աշխատանքը։

Հայաստանի ամբողջ տնտեսությունը և առանձնապես արդյունաբերությունը խոր անկում ապրեց դաշնակների տիրապետության տարիներին։ Պղնձահանքերն ու ձուլարանները դադարել էին գործելուց։ Անգործության մատնված հանքերը լցվել էին ջրով, եղած գույքը փչանում և հափշտակվում էր. Երկրի անկայուն քաղաքական վիճակի և գյուղատնտեսության քայքայման հետևանքով դադարել էին գործելուց նաև այն արտադրական ձեռնարկությունները, որոնք վերամշակում էին գյուղատնտեսական ծագում ունեցող հումքը։

Հայաստանի տնտեսական կյանքի անկումն այնքան խորն էր, որ նրա վերականգնումը սովետական կարգերի հաստատումից հետո անհնարին կլիներ առանց Սովետական Ռուսաստանի և Ադրբեջանի եղբայրական օգնության։ 1920 թվականի վերջերին ՌՍՖՍՌ կառավարությունը Վ. Ի. Լենինի գլխավորությամբ որոշում է ընդունում Սովետական Հայաստանին 3 միլիարդ ռուբլու չափով վարկ տալու մասին (ոսկով՝ 600 հազար ռուբլի)։ Սովետական Ռուսաստանը Հայաստան ուղարկեց արդյունաբերական ապրանքներ, սարքավորում, պարենամթերք, իսկ Ադրբեջանը՝ նավթամթերքներ։

Սովետական կարգերի հաստատումը արմատապես հեղաշրջեց Հայաստանի քաղաքական, տնտեսական և հոգևոր կյանքի ողջ ընթացքը։ Հայ աշխատավորները, որ անցյալում խաղալիք էին քաղաքական բախտախնդիր պարտիաների ձեռքին ու անլուր տառապանքներ էին կրում թուրքական ջարդերից և ազգամիջյան կռիվներից, վերջնականապես իրենց բախտը կապեցին կոմունիստական պարտիայի հետ։ Ստեղծված քաղաքական կայուն, խաղաղ կյանքի պայմաններում, ժողովուրդների բարեկամության մթնոլորտում Հայաստանի աշխատավորները Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ ստանձնեցին երկրի քայքայված տնտեսության շուտափույթ վերականգնումը։

Վերականգնման հետ մեկտեղ ու նրանից անմիջապես հետո սկսվեց նոր շինարար աշխատանքի հարատև ու իր վիթխարի թափով աննախընթաց շրջան։ Կարճ ժամանակամիջոցում Հայաստանի անցյալ թշվառ վիճակը մնաց որպես տխուր հիշողություն։

Սովետական Հայաստանի խաղաղ շինարարական աշխատանքները ծավալվեցին նախ քայքայված գյուղատնտեսության վերականգնման բնագավա-

տում։ Առանց այդ պայմանի, վերամշակող արդյունաբերությունը, որ կապված էր գյուղատնտեսության հումքի օգտագործման հետ, չէր կարող վերսկսել իր աշխատանքը և ապա ընդլայնվել։ Այսպես, Երևանի նախկին Շուստովի գինու-կոնյակի գործարանը, որ համեմատաբար պակաս ավերման էր ենթարկվել, Սովետական իշխանության հաստատման առաջին տարիներին, խաղողագործության ծայր աստիճան անկման ու հումքի պակասության պատճառով, հնարավորություն չուներ կանոնավոր աշխատել։

Երկրի քայքայված տնտեսության վերականգնման հետ մեկտեղ Սովետական Հայաստանում ձեռնարկվեց նաև նոր շինարարություն։ Այսպես, 1924 թ. Երևանում, Հրազդան գետի վրա սկսվեց, իսկ 1926 թ. ավարտվեց առաջին խոշոր հիդրոէլեկտրակայանի կառուցումը։ Միայն այդ կայանի կարողությունը գրեթե մեկուկես անգամ գերազանցեց նախասովետական 10 էլեկտրակայանների կարողությանը միասին վերցրած։

Երևանի հիդրոէլեկտրակայանը, բացի մայրաքաղաքի արդյունաբերության մատակարարումից, խնդիր ուներ էլեկտրաէներգիայով ապահովել նույն ժամանակամիջոցում կառուցված Այղր լճի ջրամղիչ սարքը և նրա հիման վրա ստեղծված ոռոգման սիստեմը։ Արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման խնդիրների զուգակցման պահանջով նույն տարիներին Լենինականում կառուցվեց Ծիրակի ջրանցքը և այդ ջրանցքի վրա գտնվող հիդրոէլեկտրակայանը։

Գյուղատնտեսության վերականգնման ասպարեզում 1923—1925 թվականների ձեռք բերած հաջողությունները պայմաններ ստեղծեցին վերամշակող արդյունաբերության զարգացման համար։ 1923 թվականին Երևանում ստեղծվեց առաջին մեքենայացված բամբակաղտիչ գործարանը, իսկ 1925 թվականին կառուցվեց նաև Սարգարաբադի (հետագայում՝ Հոկտեմբերյանի) ավելի խոշոր բամբակաղտիչ գործարանը։ 1923 թ. սկզբին Իվանովո-Վոզնեսենսկի բանվորների նվիրաբերած սարքավորման հիման վրա Լենինականում հիմք դրվեց տեքստիլ արդյունաբերության։ 1924—1925 թվականներին գինու-կոնյակի գործարանները նույնպես ապահովվեցին հումքով և լրիվ չափով վերսկսեցին իրենց աշխատանքները։ Վերականգնվեց նաև մետաղամշակությունը, այդ թվում գործի անցան Երևանի, Լենինականի մեխանիկական արհեստանոցները և այլն։

1926—1927 թվականներին արդյունաբերության բոլոր ճյուղերի գծով, բացառյալ գոմավոր մետալուրգիան և կոնյակի արտադրությունը, Հայաստանը հասել և գերազանցել էր մինչպատերազմյան 1913 թվականի մակարդակը։ Ընդ որում սոցիալիստական ձեռնարկությունները, համեմատած մասնավոր-կապիտալիստական բնույթի ձեռնարկությունների հետ, արդեն տալիս էին արդյունաբերական արտադրանքի բացարձակապես գերակշռող մասը։

Ինչպես ամբողջ Սովետական Միության մեջ, այնպես էլ Սովետական Հայաստանում 1928—1932 թվականները երկրի ինդուստրիալ զարգացման տեսակետից շրջադարձային նշանակություն ունեցան։ Դա առաջին հնգամյա պլանի ժամանակաշրջանն էր։ Այդ տարիներին արդյունաբերության մեջ հրակայական չափերով ընդարձակվեց կապիտալ շինարարության ծավալը։ Առաջին հնգամյակի տարիներին արդյունաբերական շինարարության ուղղությամբ

3,8 անգամ ավելի միջոցներ ծախսվեցին, քան 1920—1928 թվականներն ընդգրկող ժամանակամիջոցում։ Կառուցվեցին նոր արդյունաբերական ձեռնարկություններ ու էլեկտրակայաններ, որոնք հագեցված էին ժամանակի առաջավոր տեխնիկայով։

Երկրորդ հնգամյակում (1932—1937) Հայաստանի արդյունաբերական շինարարությունը առաջին հնգամյակի հետ համեմատած աճեց ավելի քան երեք անգամ։ Եվ այսպես, կառուցվող և գործարկվող արդյունաբերական ձեռնարկությունների թիվը, որոնք ներկայացնում էին արտադրության տարբեր ճյուղեր, տարեցտարի մեծանում էր, ընդհուպ մինչև մեր երկրի վրա հիտլերյան Գերմանիայի հարձակումը։

Կապիտալ միջոցների առավել մեծ գումարների հատկացումը Հայաստանի ժողովրդական տնտեսության և առաջին հերթին արդյունաբերության զարգացման նպատակին, բխում էր Կոմունիստական պարտիայի լենինյան ազգային քաղաքականությունից։

Նկատի առնելով Հայաստանի ժողովրդական տնտեսության մեջ էլեկտրաէներգիայի արտադրության խիստ կարևոր նշանակությունը՝ կապիտալ ներդրումները բաշխելիս առաջնահերթ ուշադրություն դարձվեց այդ խնդրի լուծման վրա։ Առանց էներգիայի առատ աղբյուրներ ստեղծելու արդյունաբերական շինարարության ընդարձակումը ռեսպուբլիկայում անհնարին էր։ Ահա ինչու առաջին և երկրորդ հնգամյակների ընթացքում արդյունաբերությանը հատկացվող ներդրումների մի երրորդը ուղղվեց հիդրոէլեկտրակայանների շինարարության նպատակին։ Կառուցվեց և 1932 թ. գործարկվեց Զորագէսի հիդրոէլեկտրակայանը՝ 22 հազար կիլովատ կարողությամբ։ Նույն տարում Երևանում, Հրազդան գետի վրա գործարկվեց երկրորդ, լրիվ ավտոմատացված հիդրոէլեկտրակայանը, որ այդ տիպի առաջին էլեկտրակայանն էր ՍՍՌՄ-ում։

Թեև առաջին հնգամյակի վերջերին Հայաստանի հիդրոէներգետիկ կարողությունները 1913 թվականի համեմատությամբ ավելի քան տասնապատկվել էին, այնուհանդերձ նրանք չէին կարող բավարարել աճող ժողովրդական տնտեսության, հատկապես արդյունաբերության պահանջները։ Այստեղից, բնականաբար, անհրաժեշտություն ծագեց գտնել էներգիայի ավելի հուժկու աղբյուրներ։ Հայաստանը չուներ քարածուխ, նավթ կամ բնական գազ։ Երկրաբանական հետախուզությունները այդ ասպարեզում ինչպես անցյալում, այնպես էլ մեր ժամանակներում դեռ դրական արդյունքներ չեն տվել։ Մյուս կողմից, մեծ քանակությամբ էլեկտրական էներգիայի արտադրությունը բերովի վառելիքի՝ Դոմբասի քարածուխի կամ Բաքվի նավթի հիման վրա, այդ շրջանում տնտեսապես իրեն չէր արդարացնի։ Բացի դրանից, պիտի նկատի առնել այն հանգամանքը, որ ողջ Սովետական Միության ինդուստրիալ բուռն վերելքի հետևանքով այդ տարիներին ամեն տեսակ վառելիքի խիստ և տևական պակաս էր զգացվում։ Այդ պայմաններում արդյունաբերական նոր ձեռնարկությունների ստեղծման գործում նախապատվությունը տրվում էր երկրի այն շրջաններին, ուր այլ հավասար պայմանների առկայությամբ կային նաև էներգիայի բավական խոշոր և էժան պաշարներ։ Ահա թե ինչու առաջին հնգամյակի տարիներին Սովետական Հայաստանի կառավարությունը ուշադրություն դարձրեց Սևանա լճում դարերով կուտակված ջրի պոտենցիալ էներգիայի օգտագործմանը։ Դա կապված էր Սևանից արտահոսող Հրազդան գետի

վրա աստիճանաձև տեղադրած, համեմատաբար մեծ կարողություն ունեցող մի շարք հիդրոէլեկտրակայանների կառուցման հետ։ Ընդ որում, Հրազդան գետի ջրի հոսանքը, ի հաշիվ Սևանա լճի դարավոր պաշարների օգտագործման, արհեստականորեն պիտի ավելանար։

Այսպես առաջ քաշվեց ու իրագործվեց Սևան-Հրազդան պրոբլեմը։ Այդ պրոբլեմի իրականացումը հնարավորություն էր տալիս ավելացնելու ռեսպուբլիկայի էներգետիկ կարողությունները ոչ թե տասնյակ հազար կիլովատներով, ինչպես մինչև այդ էր տեղի ունենում, այլ գրեթե կես միլիոն կիլովատով։ Դա մի միջոցառում էր, որ բարձրացնում էր Հայաստանի ժողովրդական տնտեսությունը, առաջին հերթին արդյունաբերությունը, զարգացման մի նոր աստիճանի։

Սևան-Հրազդան սիստեմի հիդրոէլեկտրակայանների էներգիայի հիման վրա Հայաստանում ստեղծվեց և զարգացավ քիմիական արդյունաբերությունը, որն աչքի էր ընկնում արտադրության բարձր կուլտուրայով և աշխատողների տեխնիկական գիտելիքների բարձր մակարդակով։ 1927—1928 թվականներին ձեռնարկվեց Կիրովականի Քիմիական կոմբինատի շինարարությունը, որն ավարտվեց երկրորդ հնգամյակի սկզբին։ Կոմբինատն արտադրում էր ցիանամիդ, ազոտային պարարտանյութ և կարբիդ-կալցիումից ստացվող մի շարք արժեքավոր քիմիական նյութեր։ 1932 թվականին սկսվեց միութենական նշանակություն ունեցող Կիրովի անվան քիմիական կոմբինատի կառուցումը Երևանում, որն ավարտվեց 1940 թվականին։

Հայտնի է, որ Սովետական Միությունը սինթետիկ կաուչուկների արտադրության հայրենիքն է համարվում։ Այդ թվում Ֆլորի միացությունների հիման վրա ստացվող սինթետիկ կաուչուկի արտադրությունն առաջին անգամ Սովետական Միության մեջ իրացվեց Հայաստանում, Կիրովի անվան քիմիական կոմբինատում։

Վերոհիշյալ երկու քիմիական ձեռնարկությունները Հայաստանի արդյունաբերության զարգացմանը նոր ուղղություն տվին։ Հայաստանը քիմիական արտադրանքի որոշ տեսակների՝ հատկապես սինթետիկ կաուչուկի և ապրանքային կարբիդ-կալցիումի գծով, դարձավ Սովետական Միության քիմիական արդյունաբերության խոշոր կենտրոններից մեկը։

Մինչպատերազմյան տարիներին շինարարության հսկայական ծավալման շնորհիվ Հայաստանում ստեղծվեց արդյունաբերության մի նոր ճյուղ ևս։ Դա շինանյութերի արդյունաբերությունն էր։ Խոշոր չափերով սկսվեց Արթիկ-տուֆի և Անի-պեմզայի հարուստ հանքավայրերի օգտագործումը։ Արարատ կայարանում կառուցվեց ցեմենտի խոշոր գործարան։ Ռեսպուբլիկայի տարբեր վայրերում սկսվեց բնական շինանյութերի՝ տուֆի, բազալտի, պեմզայի, մարմարի, գրանիտի մեծ քանակությամբ հանույթը։ Շինանյութերի արտադրությունը միայն առաջին հնգամյակի ընթացքում աճեց մի քանի տասնյակ անգամ, իսկ 1940 թ. շինանյութերի համախառն արտադրությունը 1932 թ. արդեն բարձրացած մակարդակը գերազանցեց 2,3 անգամ։ Ընդհանրապես բնական շինանյութերի հարուստ պաշարների առկայությունը Հայաստանի արդյունաբերական և տնտեսական շինարարության արագ զարգացման կարևոր նախապայմաններից մեկը պիտի համարել։

Նախապատերազմյան շրջանում արմատապես վերակառուցվեց, նոր տեխնիկայով հարստացավ Հայաստանի արդյունաբերության այնպիսի հին ճյուղը, ինչպիսին պղնձի հանույթն ու մետաղաձուլությունն է։ Ալավերդու պղնձաձուլական գործարանը վերափոխվեց ու ընդլայնվեց։ Տեխնիկապես կատարելագործվեցին, էլեկտրիֆիկացիայի ենթարկվեցին լեռնահանքային աշխատանքները Ղափանի և Շամլուղի հանքերում։ Աշխատատար շատ ծանր պրոցեսները մեքենայացվեցին։ Բարելավվեցին հանքափորների աշխատանքի պայմանները։ Ղափանում կառուցվեց և գործարկվեց պղնձաքարի հարստացուցիչ ֆաբրիկան։ Այս բոլորի հետևանքով 1940 թ. պղնձի հանույթը և մետաղաձուլությունը 1927 թ. համեմատությամբ աճեց մոտ երեք անգամ։

Նախապատերազմյան շրջանում թեև համեմատաբար թույլ չափերով, բայց և այնպես զարգացավ նաև մետաղամշակությունը։ 1940 թ. Երևանում սկսվեց խոշոր մեքենաշինական գործարանի կառուցումը, որը, սակայն, պատերազմի հետևանքով հետաձգվեց։

Չնայած այն բանին, որ մինչպատերազմյան հնգամյակների ընթացքում Հայաստանում ծագեցին ծանր արդյունաբերության այնպիսի կարևոր ճյուղեր, ինչպիսիք էին քիմիական արդյունաբերությունն ու շինանյութերի արդյունաբերությունը, չտեսնված չափերով զարգացավ էլեկտրաէներգիայի արտադրությունը, այնուամենայնիվ մեր ռեսպուբլիկայի այդ շրջանի համար բնորոշ էր թեթև և սննդի արդյունաբերության ավելի արագ աճը։ Այսպես, եթե խոշոր արդյունաբերության համախառն արտադրանքը 1940 թվականին 1913 թվականի հետ համեմատած ընդհանուր առմամբ ավելացավ 23 անգամ, ապա այդ նույն ժամանակամիջոցում թեթև և սննդի արդյունաբերության արտադրանքը աճեց 42 անգամ։ Դա արդյունք էր սոցիալիստական գյուղատնտեսության մեծ կոլեկտիվ ու սովետական տնտեսությունների հաղթանակի։ Գյուղի սոցիալիստական վերակառուցումը բարձրացրեց գյուղատնտեսական արտադրության ապրանքային ելքը։ Դա իր հերթին վերամշակող արդյունաբերության ծավալման խթան հանդիսացավ։

Հայաստանում կառուցվեցին և գործարկվեցին սննդի ու թեթև արդյունաբերության տասնյակ նոր, բարձր տեխնիկայով հագեցած ձեռնարկություններ։ Այսպես, Լենինականում հիմնվեց խոշոր տեքստիլ կոմբինատը՝ իր մանածային և գործվածքային ֆաբրիկաներով, գուլպա-տրիկոտաժի գործարանը, կարի և կոշկի ֆաբրիկաները և մեծ կարողությամբ ու կատարյալ տեխնիկայով մսի կոմբինատը։ Երևանում գործարկվեցին ալրաղաց և ձեթ-օճառ կոմբինատներ, կոնսերվի, հրուշակեղենի, ծխախոտի, հացի գործարաններ, մետաքսի գործարան, կարի և կոշիկի ֆաբրիկաները, կահույքի գործարանները և այլն։ Կիրովականում կառուցվեց մուշտակի ֆաբրիկան։ Ռեսպուբլիկայի գրեթե բոլոր շրջաններում ստեղծվեցին սննդի ու սպառման առարկաների արտադրության փոքր թե մեծ ձեռնարկություններ։ Ընդլայնվեց «Արարատ» գինու-կոնյակի տրեստի ձեռնարկությունների ցանցը Երևանում և ռեսպուբլիկայի խաղողագործական շրջաններում։

Այսպիսով, դեռ մինչպատերազմյան տարիներին Սովետական Հայաստանում, ի տարբերություն նախասովետական Հայաստանի, ժամանակակից ինդուստրիայի հիմունքներով, ստեղծվեց թեթև ու սննդի արդյունաբերության մի ամբողջ կոմպլեքս, որ հենվում էր գյուղատնտեսական հումքի արդյունա-

բերական վերամշակման վրա։ Դա հնարավորություն տվեց տեղում արտադրել սպառման առարկաների հսկայական մասը, որ անցյալում կամ դրսից էր ներմուծվում կամ թողարկվում էր տնայնագործական եղանակով։

Սովետական Հայաստանի մինչպատերազմյան զարգացման չափազանց կարևոր փաստերից մեկը պիտի համարել նրա տերիտորիայի երկրաբանական խոր ուսումնասիրությունը։ Այս ուղղությամբ կատարվեցին զգալի կապիտալ ներդրումներ։ Դեռ այդ տարիներին ի հայտ բերվեցին մետաղների և այլ արժեքավոր հանածոների շատ հանքավայրեր, այդ թվում Քաջարանի և Ագարակի պղնձա-մոլիբդենային հանքաքարերի հարուստ պաշարները։ Այդ հիման վրա մինչև պատերազմը ձեռնարկվեց Քաջարանի պղինձ-մոլիբդենային կոմբինատի կառուցումը, որ սակայն պատերազմի պատճառով ժամանակավորապես ընդհատվեց։

Ընդհանուր առմամբ Սովետական Հայաստանի արդյունաբերության բոլոր ճյուղերի արտադրանքը 1940 թվականին նախասովետական 1913 թ. համեմատությամբ ավելացավ 8,7 անգամ, այդ թվում խոշոր արդյունաբերության արտադրանքը՝ 22,7 անգամ։ Արդյունաբերության տարեկան միջին աճը Հայաստանում ավելի բարձր էր, քան ողջ Սովետական Միության մեջ, չնայած այն բանին, որ վերջինիս արդյունաբերական զարգացման տեմպերը ինքնըստինքյան աննախընթաց էին։

* * *

Հայաստանի, ինչպես նաև անդրկովկասյան մյուս եղբայրական ռեսպուբլիկաների՝ սովետական շրջանի ինդուստրիալ վերելքը չափազանց դրական դեր խաղաց Հայրենական պատերազմի տարիներին, հատկապես գերմանական ֆաշիզմից Անդրկովկասի ակտիվ պաշտպանության օրերին։

Սովետական Հայաստանի արդյունաբերությունը Սովետական Բանակի համար արտադրում էր հանդերձանք, կոշկեղեն, սննդամթերք, սպառազինության որոշ միջոցներ, արժեքավոր գունավոր մետաղներ ու քիմիկատներ՝ ռազմական տեխնիկայի արտադրության ու վերանորոգման համար և ուրիշ շատ ապրանքներ։

Ինչպես հայտնի է, պատերազմը հիտլերյան Գերմանիայի դեմ չկարողացավ խափանել երկրի տնտեսական կյանքը։ Պատերազմը, սակայն, դժվարացրեց արդյունաբերական ձեռնարկությունների աշխատանքը։ Որակյալ աշխատուժի մեծ մասը բանակ էր զորակոչվել։ Խախտվել էին ձեռնարկությունների նյութա-տեխնիկական մատակարարման տարիներով ստեղծված ուղիները։ Արդյունաբերության մեջ ներգրավված բանվորները գերազանցապես դեռահաս պատանիներ ու աղջիկներ էին, որոնց որակավորման համար ժամանակ էր պետք։ Եվ չնայած այս բոլորին, արդյունաբերական արտադրանքի ծավալը 1942 և 1943 թվականներին 1940 թվականի համեմատությամբ կրճատվեց միայն 19 տոկոսով։ Իսկ ինչ վերաբերում է արտադրության այն ճյուղերին, որոնք անմիջապես սպասարկում էին ռազմաճակատը, դրանց արտադրանքը ոչ միայն չկրճատվեց, այլ նույնիսկ ավելացավ։ Դա ապահովվեց նյութական, զրամական միջոցների և աշխատուժի վերաբաշխման ու ռացիոնալ օգտագործման շնորհիվ։

Ակտիվ տնտեսական գործունեության մասին են վկայում նաև այն զգալի կապիտալ ներդրումները, որոնց [redacted] ամենաթեժ տարիներին կատար-

ПА-12.304.

վում էին արտադրության նոր ճյուղեր ստեղծելու, եղած ձեռնարկությունները տեխնիկապես վերակառուցելու և ընդլայնելու նպատակով։ Այսպես, 1941—1945 թվականների ընթացքում ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության մեջ ներդրվեց 925 միլիոն ռուբլի, որ շատ պակաս չէր երկրորդ հնգամյակի կապիտալ ներդրումներից (1048 միլ. ռուբ.)։ Այդ միջոցների 52 տոկոսը, այսինքն 492 միլ. ռուբլի հատկացվեց արդյունաբերական շինարարության նպատակին։

Պատերազմի տարիներին, 1943—1944 թվականներին, վերսկսվեց Քաջարանի կոմբինատի և Երևանի էլեկտրամեքենաշինական գործարանի կառուցումը։ Նույն տարիներին ձեռնարկվեց Քանաքեռի այլումինի, Ալավերդու ծծմրաթթվի, Երևանի ավտոդողերի գործարանների, ինչպես նաև Սևանի ստորերկրյա հիդրոէլեկտրակայանի ու ջրաթող սարքի շինարարությունը։ Սկսվեց Ալավերդու պղնձաձուլական գործարանին կից պղնձի էլեկտրոլիզի ցեխի կառուցումը և վայերբարսների արտադրության կազմակերպումը։

Այսպիսով, դեռ պատերազմի տարիներին Հայաստանում սկիզբ առան արտադրության խիստ կարևոր նոր ճյուղեր։ Դա հետագայում հարստացրեց արդյունաբերության ճյուղային կառուցվածքը, որով ավելի նպաստավոր պայմաններ ստեղծվեցին ռեսպուբլիկայի էկոնոմիկայի կոմպլեքսային զարգացման համար։

Դեռ պատերազմը չավարտված, 1944 թ., հաղթահարելով արտադրության ժամանակավոր անկումը, Հայաստանի արդյունաբերությունը նորից սկսեց առաջ ընթանալ, տարեցտարի ավելացնելով իր արտադրանքի ծավալը։ Արդեն 1946 թ. արդյունաբերական արտադրանքը ռեսպուբլիկայում 6 տոկոսով գերազանցեց խաղաղ 1940 թվականի մակարդակը։

* * *

Սովետական Միության հաղթական պատերազմը հիտլերյան Գերմանիայի և միլիտարիստական Ճապոնիայի դեմ, այնուհետև մեծապես վնասված ժողովրդական տնտեսության արագ վերականգնումը կրկին անգամ հաստատեցին սովետական հասարակության անսահման կենսունակությունը, նրա զարգացման ներքին անհաղթահարելի ուժը։

Հետպատերազմյան շրջանում Սովետական Միությունում սկսվեց տնտեսական և արդյունաբերական նոր վերելք։ Առավել արագ թափով արդյունաբերությունը զարգացավ Սովետական Հայաստանում։ Այսպես, եթե ՍՍՌՄ-ի ամբողջ արդյունաբերական արտադրանքի տարեկան միջին աճը 1946—1950 թթ. կազմեց 13,6 տոկոս, իսկ 1951—1955 թթ.՝ 13,2 տոկոս, ապա Հայաստանի արդյունաբերության արտադրանքի տարեկան աճը այդ նույն ժամանակաշրջանում համապատասխանաբար կազմեց՝ 21,8 և 13,8 տոկոս։

Արտադրանքի թողարկման այդ բարձր տեմպերը ապահովվեցին ինչպես եղած ձեռնարկությունների ընդլայնման և կատարելագործման, այնպես էլ նոր գործարանների կառուցման ու գործարկման շնորհիվ։ Հետպատերազմյան 12 տարիների ընթացքում (1946 թ. մինչև 1957 թ.) Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսության մեջ ներդրվեց 7,7 միլիարդ ռուբլի (առ 1-ը հուլիսի 1955 թ. գներով), այսինքն 2,4 անգամ ավելի, քան ներդրվել էր մինչպատերազմյան քսան տարիների ընթացքում։ Նոր ներդրումների կեսից ավելին ուղղվեց արդյունաբերական շինարարության նպատակին։

Չնայած էլեկտրաէներգիայի արտադրության արագ աճին, հետպատերազմյան շրջանում Հայաստանում սուր կերպով զգացվեց նրա պակասը, որ կարող էր խոչընդոտել արդյունաբերության նորմալ աշխատանքին։ Այդ նկատառումով արագացվեց Սևան-Հրազդան սիստեմի հիդրոէլեկտրակայանների շինարարությունը։ 1949 թ. ավարտվեց և գործարկվեց Սևանի ստորերկրյա էլեկտրակայանը։ Չորս տարի հետո, 1953 թ. ավարտվեց նաև Գյումուշի՝ Սևանի ջրով աշխատող ամենահզոր հիդրոէլեկտրակայանի շինարարությունը, ևվերջապես, 1956 թ. շահագործման հանձնվեց Գյումուշից հետո տեղադրված Արզնիի ներժայոյա էլեկտրակայանը։

1956—1957 թթ. ընթացքում ավտոմատացվեցին Հայաստանի՝ իրարից անջատ, զգալի հեռավորության վրա գործող խոշոր հիդրոէլեկտրակայաններ, որոնք դեռ նախորդ տարիներին միավորվել էին բարձր լարում ունեցող էլեկտրահաղորդման գծերով։ Էլեկտրակայանների գործարկումը և ընդհատումը, ինչպես նաև նրանց աշխատանքի ընթացքի նկատմամբ վերահսկողությունն ու կանոնավորումը կատարվում է Երևանում գտնվող դիսպետչերական կենտրոնից՝ հեռուստավարման սկզբունքներով։

Հետպատերազմյան շրջանում կառուցվեցին նաև տեղական-շրջանային նշանակություն ունեցող մի քանի տասնյակ փոքր էլեկտրակայաններ։ Այս բոլորի շնորհիվ էլեկտրաէներգիայի արդյունաբերությունը Հայկական ՍՍՌ-ում ավելացավ և 1957 թ. կազմեց 2433 միլիոն կիլովատ ժամ։ 1940 թ. համեմատությամբ էլեկտրաէներգիայի արտադրությունն աճեց ավելի քան վեց անգամ։

Էլեկտրաէներգիայի արտադրությունը և նրա գործածությունը ժողովրդական տնտեսության մեջ կարևոր ցուցանիշ է տվյալ երկրի արտադրողական ուժերի զարգացման աստիճանի։ Այդ տեսակետից որոշակի հետաքրքրություն են ներկայացնում ստորև բերված տվյալները։

Աղդարնակչության մեկ շնչին ընկնող էլեկտրաէներգիայի արտադրությունը Հայկական ՍՍՌ-ում համեմատած մի շարք կապիտալիստական երկրների հետ (1955 թ. տվյալներով)[1]

Երկիրը	Աղդարնակչությունը (հազար մարդ)	Էլեկտրաէներգիայի արտադրությունը (միլիոն կիլովատ ժամ)	Աղդարնակչության մի շնչին ընկնող էլեկտրաէներգիայի քանակը (կիլովատ ժամերով)
Հայկական ՍՍՌ	1633[2]	2214	1356
Ֆրանսիա . .	43400	49600	1147
Իտալիա . . .	48100	39000	810
Ճապոնիա . .	90000	64000	711
Թուրքիա . .	24100	1842[3]	75
Իրան . . .	21800	694[4]	32

[1] Կազմվել է «Սոցիալիզմի և կապիտալիզմի երկրները թվերով» վիճակագրական տեղեկատուի տվյալների հիման վրա (Մոսկվա, Քաղաքական գրականություն հրատարակչություն, 1957, ռուսերեն). Հայկական ՍՍՌ ցուցանիշները հաշվարկվել են «Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսությունը» վիճակագրական տեղեկատուի տվյալների հիման վրա, Երևան, 1957։

[2] Հայկական ՍՍՌ աղդաբնակչությունը վերցված է 1956 թ. տվյալներով։

[3] Տրվում է ՍՍՌՄ Արտաքին առևտրի մինիստրության գիտա-հետազոտական ինստիտուտի տվյալների հիման վրա և վերաբերում է 1957 թ.։

[4] Տրվում է ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Համաշխարհային տնտեսության և համաշխարհային քաղաքականության ինստիտուտի տվյալների հիման վրա և վերաբերում է 1956 թ.։

Այս տվյալները ցույց են տալիս, որ էլեկտրաէներգիայի արտադրության, և, իհարկե, ոչ միայն այդ, այլև շատ բնագավառներում, Հայաստանն այնքան է առաջ անցել անմիջապես իրեն սահմանամերձ օտար պետություններից՝ Թուրքիայից և Իրանից, որ համեմատությունը նրանց հետ ոչ մի իմաստ չունի։ Ավելին, Հայաստանի ցուցանիշները ազդարարակչության մեկ շնչին ընկնող էլեկտրաէներգիայի արտադրության չափի տեսակետից, որոնք գերազանցում են Ֆրանսիայի, Իտալիայի և Ճապոնիայի համապատասխան տվյալները, խոսում են այն մասին, որ այժմ մեր ռեսպուբլիկան տնտեսական զարգացման շատ ցուցանիշների գծով համարձակորեն կարող է համեմատության մեջ մտնել կապիտալիզմի նշանավոր երկրների հետ։

Ռեսպուբլիկայի էներգետիկ բազայի ուժեղացումը հնարավորություն տվեց հետպատերազմյան շրջանում շատ անգամ ավելացնել քիմիական արդյունաբերության արտադրանքի թողարկումը։ Այդ տարիներին Կիրովականում կազմակերպվեց սինթետիկ ազոտային, իսկ Ալավերդում՝ ֆոսֆորային պարարտանյութերի արտադրությունը, որ չափազանց մեծ նշանակություն ունի դյուղատնտեսական կուլտուրաների բերքատվության բարձրացման համար։ Ալավերդում պղնձաձուլության պրոցեսում արձակվող ծծմբային դաղերի արդյունաբերական օգտագործման հիման վրա կազմակերպվեց ծծմբաթթվի հատուկ արտադրություն։ Երևանում կառուցվեց և գործարկվեց ավտոդողերի գործարանը։ Վերջինս կարճ ժամանակամիջոցում դարձավ առաջավոր ցուցանիշներ և արտադրանքի իրացման մեծ շառավիղ ունեցող այդ տիպի գործարաններից մեկը Սովետական Միությունում։

Հետպատերազմյան շրջանում Հայաստանի քիմիական արդյունաբերության մեջ էլ ավելի ուժեղ զարգացում ստացավ ժամանակակից քիմիայի ամենապրոգրեսիվ ուղղությունը՝ օրգանական սինթեզը, որի սկիզբը մինչ այդ դրվել էր Երևանի Կիրովի անվան քիմիական կոմբինատի կառուցումով։ Երևանում գործարկվեց օրգանական քիմիայի երկրորդ խոշոր ձեռնարկությունը՝ Պոլիվինիլացետատ գործարանը։ Նա թողարկում է մի շարք կարևոր սինթետիկ նյութեր, որոնք ածանցվում են ացետիլենից։ Այս վերջինս իր հերթին ստացվում է կալցիում-կարբիդից, որի արտադրությունը խոշոր մասշտաբներով աճեց շնորհիվ Հայասատանի՝ քիմիական կազմով բացառիկ մաքուր կրաքարերի անսպառ պաշարների։ Բացի հիշատակածից, կառուցվեցին նաև մի քանի այլ քիմիական ձեռնարկություններ։

Ռեսպուբլիկայում այժմ արտադրվող քիմիական նյութերի ցանկը մի քանի տասնյակ է կազմում։ Այդ թվում մեծ քանակությամբ թողարկվում են քլորպրենային սինթետիկ կաուչուկ, կաուստիկ սոդա, կալցիում-կարբիդ, կարբինոլ, սինթետիկ ամիակ, ազոտային և ֆոսֆորային պարարտանյութեր, քացախաթթու, աղաթթու, ազոտային և ծծմբային թթուներ, մոնոխրոմատ, մետանոլ, պղնձարջասպ, ավտոդողեր, ռետինե տեխնիկական շատ իրեր և դանազան ներկեր։ Հատուկ հիշատակության է արժանի վինիլացետատի և նրանից արտադրվող պոլիվինիլ-բուտերալ մաստայի և թաղանթի ու այլ նյութերի թողարկումը։

Որակական զգալի փոփոխություններ տեղի ունեցան ռեսպուբլիկայի գունավոր մետալուրգիայի ասպարեզում։ Նրա արտադրանքը 1940—1957 թթ. ընթացքում խիստ ավելացավ։ Բացի էլեկտրոլիտիկ պղնձից և հարակցաբար ստացվող ոսկուց ու արծաթից, շնորհիվ չորրորդ հնգամյակի վերջերին

Քանաքեռի ալյումինի գործարանի գործարկման, Հայաստանն սկսեց թողարկել նաև ժամանակակից տեխնիկայի մեջ լայն տարածում ստացած այնպիսի մետաղ, ինչպիսին ալյումինն է։ Այդ մետաղի՝ ազգաբնակչության մեկ շնչին ընկնող թողարկման չափով ևս Հայաստանը այժմ ավելի բարձր մակարդակի վրա է կանգնած, քան Իտալիան և մանավանդ Ֆրանսիան։

Բացի վերոհիշյալից, Հայաստանի գունավոր մետալուրգիան սկսեց թողարկել կապարի, ցինկի ֆլոտացիոն խտանյութեր և, որ ամենաարժեքավորն է, մոլիբդենի խտանյութը։ Ընդ որում այս վերջինիս արտադրության գծով, շնորհիվ Քաջարանի պղնձա-մոլիբդենային խոշորագույն հանքավայրի արդյունաբերական իրացման, Հայաստանը Սովետական Միության մեջ գրավեց առաջին տեղերից մեկը։

Հայաստանում այժմ կազմակերպվել է ոչ միայն մի շարք արժեքավոր գունավոր մետաղների արդյունահանումն ու ձուլումը, այլև նրանց գլանումը։ Դա հնարավորություն է տալիս հենց տեղում այդպիսիք օգտագործել զարգացող մեքենաշինության մեջ՝ հատկապես էլեկտրատեխնիկական արդյունաբերության բնագավառում։

Թեև մինչպատերազմյան տարիներին մետաղամշակությունը Հայաստանում ընդհանրապես զարգացավ և նրա արտադրանքը 1940 թվականին համեմատած 1913 թվականի հետ աճեց շուրջ 15 անգամ, սակայն մեքենաշինությունը, որպես արտադրության լիապես ձևավորված ճյուղ, այն ժամանակ դեռևս բացակայում էր։ Սննդի արդյունաբերության համար մի քանի ձեռնարկությունների կողմից թողարկվող սարքավորման որոշ տեսակները, գյուղատնտեսական մեքենաները և այլն, մետաղամշակման ընդհանուր արտադրանքի մեջ մեծ տեսակարար կշիռ չունեին։

Մեքենաշինությունը Հայաստանում շեշտակի վերելք ապրեց միայն հետպատերազմյան շրջանում։ Նրա արտադրանքը 1940—1957 թվականների ընթացքում ավելացավ մոտ 80 անգամ։ Ջերժինսկու անվան գործարանը Երևանում ընդլայնվեց և մասնագիտացավ մետաղահատ հաստոցների թողարկման ուղղությամբ։ Երևանում, Լենինականում, Կիրովականում և Հոկտեմբերյանում ստեղծվեցին նոր հաստոցաշինական ձեռնարկություններ։ Բացի դրանից կազմակերպվեցին կոմպրեսորների, հիդրոտուրբինների, ավտոպահեստային մասերի, հեծանիվի, քարհատ, շաղափող և ծակող մեքենաների գործարաններ։

Մեքենաշինության մեջ, որպես որոշակի ճյուղ, որ բնորոշում է ռեսպուբլիկայի մասնագիտացումը, առանձնացավ էլեկտրատեխնիկական արդյունաբերությունը և սարքաշինարարությունը։ Գունավոր մետաղների, սինթետիկ կաուչուկի, մեկուսիչ նյութերի արտադրության առկայությունը բարենպաստ պայմաններ ստեղծեցին Հայաստանում էլեկտրատեխնիկական արդյունաբերության ու սարքաշինարարության զարգացման համար։

Խոշոր մեքենաշինական ձեռնարկությունը, որի շինարարությունն սկսվեց դեռ 1940 թ. և պատերազմի հետևանքով ընդհատվեց, գործարկման ենթարկվեց 1947 թ. Երևանում։ Հետագայում նա վերանվանվեց Վ. Ի. Լենինի անվան էլեկտրամեքենաշինական գործարան։ Այժմ նա ՍՍՌՄ-ում այդ տիպի ամենախոշոր գործարաններից է։ Էլեկտրամեքենաշինական գործարանը խոշոր սերիաներով արտադրում է տրանսֆորմատորներ, գեներատորներ, կոմպլեկտավորված տրանսֆորմատորային ենթակայաններ, շարժական դիզել-էլեկտրակայաններ և

այլն։ Գործարանի արտադրանքն ուղարկվում է ՍՍՌՄ գրեթե բոլոր շրջանները և արտահանվում արտասահմանյան 26 պետություններ։

Բացի այդ գործարանից Երևանում ստեղծվել են երկու այլ գործարաններ՝ էլեկտրատեխնիկական և էլեկտրաշարժիչների, որոնք թողարկում են տարբեր կարողության էլեկտրաշարժիչներ։ Էլեկտրատեխնիկական մի ուրիշ գործարան կազմակերպվել է Լենինականում։

Էլեկտրատեխնիկական արդյունաբերության ստեղծմանը նախորդեց անմիջապես պատերազմից հետո Երևանի Կարելի գործարանի կազմակերպումը՝ նախկին փայտամշակման կոմբինատի պատրաստի արտադրական տարածությունների հիման վրա։ Հետագա տարիներում այդ ձեռնարկությունը խիստ ընդլայնվեց։ Նա մեծ չափով նպաստեց ռեսպուբլիկայում էլեկտրատեխնիկական արդյունաբերության զարգացման գործին։ Կարելի գործարանը թողարկում է տեղակայման և փաթույթային լարեր, լուսավորման քուղեր, զանազան կաբելներ, գունավոր մետաղների գլանվածքներ և այլն։

Հայաստանի սարքաշինական արդյունաբերության առաջնեկը էլեկտրաճշգրիտ գործիքների գործարանն է։ Նա կառուցվել և գործարկվել է պատերազմից հետո։ Չնայած դրան, գործարանն այժմ ՍՍՌՄ-ի սարքաշինական գործարանների մեջ նշանավոր տեղ է բռնում։ Այդ գործարանի շնորհալի կոլեկտիվը կարճ ժամանակամիջոցում իրացրել և հարյուր հազարներով թողարկում է տեխնիկական բարձր կուլտուրա պահանջող մի շարք սարքեր, միկրոամպերաչափեր, միլիվոլտաչափեր և միլիամպերաչափեր՝ էլեկտրական հոսանքի և լարվածության չափման համար, բարձրավոլտային կայանքների լարվածությունն ստուգող բարձր լարման ցուցանակներ, հոսանքորոնիչներ, հոսանքչափիչ աքցաններ և այլ բարդ սարքեր։

Այս տիպի մյուս ձեռնարկությունը Երևանի սարքաշինական գործարանն է, որը սկսեց գործել 1957 թ. կեսից։ Գործարանը թողարկում է տարբեր մարկաների մոնոչափեր և միլիվոլտաչափեր, որոնց միջոցով արտադրության մեջ հսկում և կարգավորում են մինչև 1600 աստիճան հասնող ջերմային պրոցեսները։ Այդ գործիքների օգտագործումը արտադրության մեջ փոխարինում է մեծ թվով բանվորների երրեմնի ծանր աշխատանքը, նպաստում է արտադրանքի որակի բարձրացմանը, հումքի և վառելիքի խնայողությանը։

1950 թվականից Երևանում աշխատում է ժամացույցի գործարանը, որը 1957 թ. թողարկեց մեկուկես միլիոն զարթուցիչ ժամացույց։ Բացի այդ կառուցվեց և գործարկվեց էլեկտրական և լյումինեսցենտային լամպերի գործարան, որն իր արտադրանքով առաջիկա տարիներին կդառնա ՍՍՌՄ-ի այդ կարգի խոշոր գործարաններից մեկը։

Ճշգրիտ մեքենաշինության, սարքաշինության ուղղությունն ամենահեռանկարայինն է Հայաստանի համար։ Արտադրության այդ ճյուղը պահանջում է քիչ նյութ և բարձր որակավորում ունեցող բանուժ։ Մյուս կողմից, եթե նկատի առնենք ժամանակակից արդյունաբերության մեջ ամենուրեք կիրառվող արտադրական պրոցեսների կոմպլեքսային մեքենայացումը և ավտոմատացումը, այդ ճյուղի առջև դրվող խնդիրները հսկայական են։ Ահա ինչու սարքաշինության և ավտոմատացման միջոցների զարգացման ուղղությամբ համապատասխան գիտա-տեխնիկական հիմք ապահովելու համար վերջերս որոշվեց ստեղծել մի շարք հատուկ կազմակերպություններ։ Այսպես, Երևանում կազմակերպվեց Մաթեմատիկական-հաշվիչ մեքենաների գիտա-հետազոտական ինստի-

տուտ։ Քիմիական արդյունաբերության և գունավոր մետալուրգիայի տեխնոլոգիական պրոցեսների ավտոմատացման համար Կիրովականում ստեղծվեց «Ավտոմատիկա» գիտա-հետազոտական ինստիտուտը։ Լենինականում և Կիրովականում սարքաշինարարության ուղղությամբ կազմակերպվել են հատուկ կոնստրուկտորական բյուրոներ, որոնք ունեն իրենց ինքնուրույն արտադրական բազաները։

Հայաստանում ծավալվող հսկայական կապիտալ շինարարությունը բնականաբար պահանջում է, որպեսզի արագ տեմպերով աճի նաև շինանյութերի արդյունաբերության արտադրանքը։ Այն ընդհանուր առմամբ 1957 թ. համեմատած 1940 թ. հետ, ավելացավ 8,5 անգամ։ Տուֆաքարը, ինչպես հայտնի է, Հայաստանի պայմաններում պատշարման հիմնական նյութն է համարվում. նրա արտադրությունը տասնապատկվեց և կազմեց գրեթե մեկ միլիոն խորանարդ մետր։ Ցեմենտի արտադրությունը ավելացավ 2,4 անգամ և 1957 թ. հասավ 232 հազար տոննայի։ Վերջին տարիներս կազմակերպվեցին շինանյութերի և շինարարական կոնստրուկցիաների շատ նոր տեսակների կատարելագործված արտադրություններ։ Այդ միջոցով խնդիր է դրվում արագացնել և էժանացնել շինարարական բոլոր տեսակի աշխատանքները։

Սովետական Հայաստանի արդյունաբերության մեջ, ինչպես ասվեց, հետպատերազմյան շրջանում առավել արագ տեմպերով զարգացան ծանր ինդուստրիայի, արտադրության միջոցների արտադրության ճյուղերը։ Եթե մինչև պատերազմը ռեսպուբլիկայի արտադրական բանվորների մեծ մասը զբաղված էր արդյունաբերության այն ճյուղերում, որոնք թողարկում էին սպառման առարկաներ, ապա այժմ այդ հարաբերակցությունը փոխվել է հօգուտ արտադրության միջոցների արտադրության ճյուղերի։

Չնայած դրան ռեսպուբլիկայի թեթև և սննդի արդյունաբերությունը նույնպես շարունակում է տարեցտարի աճել։ Դրան նպաստում է գյուղատնտեսության ապրանքայնության ավելացումը։ Պատերազմից հետո կառուցվել և շահագործման են հանձնվել մի շարք ձեռնարկություններ, այդ թվում Սպիտակի՝ շաքարի, Հոկտեմբերյանի և Այրումի՝ պահածոների, Երևանի՝ կոնյակի գործարանները և տասնյակ ուրիշ համեմատաբար մանր ձեռնարկություններ։ 1940 թ. համեմատությամբ 1957 թ. կենդանական յուղի արտադրանքն աճեց 3,6 անգամ, պանրի արտադրությունը՝ 3,5, մրգի և բանջարեղենի պահածոների արտադրությունը՝ 4,4, մսի արտադրությունը՝ 1,8, երշիկեղենի արտադրությունը՝ 4, ծխախոտի արտադրությունը՝ 5,6 հրուշակեղենի արտադրությունը՝ 3,8 անգամ։

Թեթև արդյունաբերության արտադրանքի շատ տեսակներ արտադրվում են ոչ միայն նկատի առնելով ռեսպուբլիկայի ազգաբնակչության պահանջները։ Այդ արտադրանքի զգալի մասը ուղարկվում է Սովետական Միության տարբեր շրջաններ։

Թեթև արդյունաբերության գծով կառուցվել և գործարկվել են նաև Վ. Ի. Լենինի անվան Երևանի մետաքսե գործվածքների գործարանը, Երևանի նորը բրդյա գործվածքների և մահուդի գործարանները, Կիրովականի տրիկոտաժի գործարանը և այլ ձեռնարկություններ։ 1940 թ. մինչև 1957 թ. ընդգրկող ժամանակամիջոցում թեթև արդյունաբերության արտադրանքի կարևոր տեսակների թողարկումն աճեց հետևյալ չափերով.

Թողարկած ապրանքների տեսակները	Չափի միավորը	1940 թ.	1957 թ.
Կաշվից կոշիկներ . . .	հազ. զույգ	943,0	3824
Բամբակյա կտորեղեն . .	միլ. մետր	26,8	60,2
Բրդյա կտորեղեն . . .	հազ. մետր	17,0	3000,0
Մետաքսյա կտորեղեն . .	» »	201,0	6266,0
Գորգեր և գորգային իրեր .	հազ. քառ. մետր	16,1	89,0
Տրիկոտաժից սպիտակեղեն	հազ. հատ	2057,0	19366,0
Տրիկոտաժից հագուստեղեն .	» »	976,0	1382,0
Գուլպա	հազ. զույգ	9785	26202

Եթե վերցնենք Սովետական Հայաստանի արդյունաբերության համախառն արտադրանքը 1957 թ. ամբողջությամբ և այն համեմատենք 1913 թ. հետ, ապա աճը կլինի 49,1 անգամ, իսկ այդ նույն համեմատությունը 1940 թ. հետ ցույց կտա արտադրանքի ավելացում 5,7 անգամ։ Այս տվյալները վկայում են, որ Սովետական Հայաստանը արդյունաբերության ասպարեզում զարգացման ամենաբարձր տեմպեր ունեցող ռեսպուբլիկաներից է։

Արդյունաբերության զարգացման շնորհիվ փոխվեց Հայաստանի ազգաբնակչության կազմը։ Քաղաքային ազգաբնակչությունը 1913—1956 թվականների միջև ընկած ժամանակամիջոցում գրեթե յոթ անգամ աճեց. նրա տեսակարար կշիռը 1913 թ. 10,4 %-ի փոխարեն 1956 թ. կազմեց 44,4%։ Այդ նույն ժամանակամիջոցում գյուղական ազգաբնակչության տեսակարար կշիռը 89,6%-ից իջավ մինչև 55,6%։

Ռեսպուբլիկայի մայրաքաղաք Երևանը, որ անցյալում համեստ գավառային քաղաք էր, 30—40 հազար ազգաբնակչությամբ, այժմ դարձել է ՍՍՌՄ-ի խոշոր արդյունաբերական և կուլտուրական կենտրոններից մեկը՝ մոտ կես միլիոն բնակչությամբ։ Մի քանի անգամ մեծացել է նաև Լենինական, Կիրովական, Ալավերդի, Զափան, Նոր-Բայազետ և Տորիս քաղաքների բնակչության թիվը։ Սովետական տարիներին առաջացել են մի շարք նոր քաղաքներ և քաղաքատիպ արդյունաբերական ավաններ, ինչպիսիք են Արթիկ-տուֆը, Հոկտեմբերյանը, Արարատը, Քաջարանը, Սևանը, Ախտան և Լուսավանը։

Հայաստանի արդյունաբերական զարգացման մեծագույն արդյունքներից մեկը պիտի համարել բարձր որակավորում ունեցող աշխատուժի ստեղծումը։ Հայաստանի արդյունաբերության և շինարարության մեջ աշխատում են 138 հազար բանվոր, ինժեներ, ծառայող, այդ թվում մոտ 5 հազար ինժեներ բարձրագույն և 4 հազար տեխնիկ հատուկ միջնակարգ կրթությամբ։ Այդ մարդկանց հմուտ ձեռքերի տակից դուրս են գալիս ժամանակակից արդյունաբերական արտադրանքի բազմաթիվ տեսակներ։ Տարածվելով ամբողջ աշխարհով մեկ, նրանք միաժամանակ կարող են լինել հայ աշխատավորների արտադրական-տեխնիկական կուլտուրայի փայլուն վկայագիր և միաժամանակ այդ կուլտուրայի թռիչքային աճի ապացույց։ Դժվար է առանց հուզմունքի դիտել Հայաստանում արտադրվող բարդ օրգանական սինթեզի արդյունք քիմիկատները, միկրոնների ճշտությունն ունեցող հաստոցները, նրբին էլեկտրաչափիչ գործիքները, գեղատեսիլ մետաքսյա, բրդյա գործվածքները։ Չէ որ հայ աշխատավոր մասսայի համար ոչ այնքան հեռավոր անցյալում բնորոշ էր շուրի, արորի, եզան սայլի, տնայնագործ կտավի, տրեխի, պայտի արտադրությունը։ Այդ ար-

տադրանքն էր միաժամանակ բնորոշում հայ միջին աշխատուժի, եթե կարելի է այսպես արտահայտվել, արտադրական-տեխնիկական մտահորիզոնը։

Ինչպես ամբողջ Սովետական Միությունում, այնպես էլ Հայաստանում, արդյունաբերությունը զարգանում է տեխնիկայի անընդհատ պրոգրեսի պայմաններում։ Ձեռնարկությունների գործող սարքավորումը, եթե այն հնանում և արգելակում է արտադրության աճը, փոխարինվում է նոր, բարձր արտադրողական սարքավորումով։ Անընդհատ կատարելագործվում է արտադրության տեխնոլոգիան, նրա կազմակերպումը։ Դրա հիման վրա բարձրանում է աշխատանքի արտադրողականությունը, արտադրանքի որակը, իջնում է այդ արտադրանքի ինքնարժեքը։

Պետք է նկատել, որ Սովետական Հայաստանի արդյունաբերության արտադրական ներքին ռեզերվները, չօգտագործած հնարավորությունները դեռ բավականին մեծ են։ Ռեսպուբլիկայի աշխատավորները իրավամբ պարծենալով արդյունաբերության զարգացման ասպարեզում իրենց ձեռք բերած հաջողություններով, չեն մոռանում այդ զարգացման ընթացքում ծագած կամ նկատված թերությունների անհապաղ վերացման անհրաժեշտությունը։ Այդ տեսակետից սովետական տնտեսության, այդ թվում և արդյունաբերության անընդհատ առաջխաղացումը սխալ կլիներ պատկերացնել որպես մի տոնական երթ, որ իր ճանապարհին չունի խոչընդոտներ, դժվարություններ։ Տնտեսության հարաճուն վերելքը սովետական մարդկանց կողմից ձեռք է բերվում համառ, քրտնաջան աշխատանքի, ստեղծագործ պայքարի, դժվարությունների հաղթահարման միջոցով։ Նա ձեռք է բերվում շնորհիվ այն բանի, որ աշխատավորների գործողությունների մեջ կա անձնական ու համապետական շահերի և նպատակների միասնություն։ Այդ հիման վրա աճում է նաև իրենց՝ աշխատավորների նյութական և կուլտուրական բարեկեցությունը։

Սովետական Հայաստանի արդյունաբերական զարգացման վերը բերած տեսությունից երևում է, որ արդյունաբերությունն այստեղ սկզբից ևեթ ստեղծվեց որպես ՍՍՌՄ-ի մեծ արդյունաբերության հատվածներից մեկը։ Հասարակական աշխատանքի համամիութենական բաժանման մեջ, համաձայն միասնական ժողովրդատնտեսական պլանի, Հայաստանի արդյունաբերությունն այժմ գրավում է իր հաստատուն, որոշակի և շատ տեսակետներից չափազանց արժեքավոր տեղը։ Այդ արդյունաբերությունը փոխադարձ արտադրական և գործարար բազմահազար կապերով կապված է Սովետական Միության այլ տնտեսական շրջանների, արդյունաբերական կենտրոնների, ձեռնարկությունների, գիտա-հետազոտական, նախագծային և այլ հիմնարկների հետ։ Այդ կապերը արտահայտվում են փոխադարձաբար կատարվող գիտա-տեխնիկական օգնության, կոոպերացված սպասարկումների, վերամշակման ենթակա արդյունաբերական ապրանքների, նյութերի, անհրաժեշտ վառելիքի, էներգիայի ստացման, ինչպես նաև պատրաստի արտադրանքի իրացման մեջ։ Որպես ապացույց Սովետական Հայաստանում ծավալված արդյունաբերական գործունեության լայն դիապազոնի, կարելի է վկայակոչել այն հանգամանքը, որ այստեղ արտադրվող ապրանքների շուկան շատ հաճախ ոչ միայն ընդգրկում է ամբողջ Սովետական Միությունը, այլ վերջինիս արտաքին առևտրի ուղեգծերով դուրս է գալիս ՍՍՌՄ-ի սահմաններից։ Հայաստանի արդյունաբերության արտադրանիշը կրող շատ ապրանքներ այժմ կարելի է հանդիպել արտասահ-

մանյան 31 երկրներում, այդ թվում Չինաստանում, Հնդկաստանում, Արգենտինայում, Չեխոսլովակիայում, Լեհաստանում և այլուր։

Գործունեության այսպիսի մեծ շառավիղ ունեցող արդյունաբերության ստեղծումը անցյալի Հայաստանում անհնարին ու աներևակայելի էր։ Դա հնարավոր դարձավ և իրականացվեց միայն Սովետական իշխանության պայմաններում։

* *

Վերջերս կայացավ ՍՄԿՊ XXI համագումարը, որը քննության առավ ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1959—1965 թվականների կոնտրոլ թվերը։ Ինչպես նշված է այդ առթիվ արած ընկեր Ն. Ս. Խրուշչովի զեկուցման մեջ, ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1959—1965 թվականների յոթնամյա պլանի գլխավոր խնդիրն է էկոնոմիկայի բոլոր ճյուղերի հետագա հզոր վերելքը ծանր ինդուստրիայի առավել աճման բազայի վրա, երկրի անտեսական պոտենցիալի զգալի ուժեղացումն այն հաշվով, որպեսզի ապահովվի սովետական ժողովրդի կենսամակարդակի անընդհատ բարձրացումը։

Այդ պլանի իրագործմամբ մի վճռական քայլ կկատարվի կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի ստեղծման և ՍՍՌՄ-ի հիմնական տնտեսական խնդրի իրականացման գործում՝ պատմական ամենակարճ ժամկետում հասնել ու անցնել կապիտալիստական առավել զարգացած երկրներից բնակչության մեկ շնչին ընկնող արտադրանքի արտադրությամբ։

ՍՍՌՄ-ի արդյունաբերության համախառն արտադրանքը 1965 թվականին, 1958 թվականի համեմատությամբ, կաճի մոտավորապես 80 տոկոսով, այդ թվում արտադրության միջոցների արտադրությունը 85—88 տոկոսով և սպառման առարկաների արտադրությունը՝ 62—65 տոկոսով։

Նախատեսված է 1965 թվականին ձուլել 65—70 միլիոն տոննա չուգուն, կամ 65—77 տոկոսով ավելի, քան 1958 թվականին, պողպատ՝ 86—91 միլիոն տոննա, կամ 56—65 տոկոսով ավելի, արտադրել 65—70 միլիոն տոննա կամ 52—64 տոկոսով ավելի գլանվածք։ Ալյումինի արտադրությունը 1958 թվականի համեմատությամբ նախատեսված է ավելացնել մոտավորապես 2,8 անգամ, պղծի պղնձինը՝ 1,9 անգամ։

Քիմիական արտադրանքի արտադրության ընդհանուր ծավալը կմեծանա մոտավորապես 3 անգամ։ Լայն զարգացում պիտի ստանա սինթետիկ նյութերի արտադրությունը. քիմիական թելանյութերի արտադրությունը կավելանա 3,8—4 անգամ, դրանցից առավել արժեքավոր սինթետիկ թելանյութերինը՝ 12—14 անգամ, իսկ պլաստիկ մասսաներինը և սինթետիկ ձյութերինը՝ 6,7 անգամ։

Նավթի հանույթը նախատեսված է 1965 թվականին հասցնել 230—240 միլիոն տոննայի կամ 1958 թվականի համեմատությամբ բարձրացնել ավելի քան 2 անգամ։ Գազի արդյունահանումն ու արտադրությունը 1965 թվականին նախատեսվում է հասցնել 150 միլիարդ խորանարդ մետրի, 1958 թվականի 30 միլիարդ խորանարդ մետրի դիմաց։

1965 թվականին ՍՍՌՄ էլեկտրաէներգիայի արտադրությունը կհասնի 500—520 միլիարդ կիլովատ ժամի, այսինքն՝ կավելանա 2—2,2 անգամ։

Մեքենաշինության և մետաղամշակման արտադրանքի արտադրությունը նախատեսվում է յոթնամյակում ավելացնել համարյա 2 անգամ։ Առավել բարձր տեմպերով կզարգանան արդյունաբերության այնպիսի ճյուղեր, ինչպիսիք են ծանր մեքենաշինությունը, սարքաշինությունը, ռադիոէլեկտրոնիկան, էլեկտրատեխնիկական, հաստոցաշինական արդյունաբերությունը։

Մեքենաշինության զարգացման բարձր տեմպերը կապահովեն ձեռնարկությունների դինամիկ նոր սարքավորումներով և արտադրության տեխնոլոգիայի արմատական բարելավումը։ Դա աշխատանքի արտադրողականության բարձրացման վճռական գործոն կլինի, կհեշտացնի աշխատանքի պայմանները և հնարավորություններ կստեղծի աշխատանքի օրվա հետագա կրճատման համար։

Յոթնամյակի ընթացքում նախատեսվում է թեթև արդյունաբերության արտադրանքն ավելացնել 1,5 անգամ, իսկ սննդի արդյունաբերությանը՝ 1,7 անգամ։ Բամբակյա գործվածքների արտադրությունը կավելանա 33—38 տոկոսով, բրդյա գործվածքներինը՝ 65 տոկոսով, մետաքսյա գործվածքներինը՝ 76 տոկոսով։ Մսի արտադրությունը կաճի 2,1 անգամ, յուղինը՝ 1,6 անգամ, շաքարավազինը՝ 76—90 տոկոսով, կաթինը՝ 2,1 անգամ։

1959—1965 թվականներին պետական կապիտալ ներդրումների ծավալը ՍՍՌՄ-ում կկազմի 1940—1970 միլիարդ ռուբլի կամ 1,8 անգամ ավելի, քան նախորդ յոթ տարիներին։

Նախատեսվում է սովետական ժողովրդի բարեկեցության հետագա աճ։ Բանվորների և ծառայողների ռեալ եկամուտները յոթնամյակի ընթացքում, մեկ աշխատողի հաշվով, միջին չափով կաճեն 40 տոկոսով՝ ինչպես դրամական աշխատավարձի, կենսաթոշակների ու նպաստների աճի շնորհիվ, այնպես էլ հասարակական սննդի դների հետագա իջեցման միջոցով։ 1962 թվականին լիովին պիտի իրագործվի յոթժամյա աշխատօր ունեցող բանվորների ու ծառայողների փոխադրումը 40-ժամյա աշխատանքային շաբաթի։ 1964 թվականից նախատեսվում է աստիճանական փոխադրումը 30-ժամյա աշխատանքային շաբաթվա՝ ստորերկրյա աշխատանք կատարող և վնասակար արտադրական պայմաններում աշխատողների համար և 35-ժամյա աշխատանքային շաբաթվա՝ մնացած բոլոր աշխատողների համար։ Այս միջոցառումները կավարտվեն 1966—1968 թվականներին։ Դրա շնորհիվ ՍՍՌՄ-ում կլինի աշխարհի ամենակարճ աշխատօրը և ամենակարճ աշխատանքային շաբաթը։

ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1959—1965 թվականների կոնտրոլ թվերը հիանալի հեռանկարներ են բաց անում նաև Հայկական ՍՍՌ-ի առջև։ Այդ խնդրի բազմակողմանի քննությանը անդրադարձավ Հայաստանի կոմունիստական պարտիայի 1959 թ. հունվարին կայացած XX համագումարը։ Արդյունաբերական արտադրանքը յոթնամյակի ընթացքում նախատեսվում է ավելացնել 2,2 անգամ, այսինքն՝ այն կաճի ավելի արագ տեմպերով, քան միջին հաշվով դա նախատեսվում է ամբողջ երկրի մասշտաբով։ Ռեսպուբլիկայի արդյունաբերական դեմքը բնորոշող արտադրական ճյուղերը կհանդիսանան գունավոր մետալուրգիան, օրգանական՝ սինթեզի քիմիան, ճշգրիտ հաստոցաշինությունը, սարքաշինությունը և էլեկտրատեխնիկական արդյունաբերությունը։ Եթե ամբողջությամբ վերցրած արդյունաբերական արտադրանքը ռեսպուբլիկայում 1959—1965 թվականների ընթացքում պիտի

աճի 2,2 անգամ, ապա քիմիական արդյունաբերության արտադրանքը կաճի 3,3 անգամ, գունավոր մետալուրգիայինը՝ 2,9 անգամ, մեքենաշինությանն ու մետաղամշակությանը՝ 3,5 անգամ, ռադիոտեխնիկական արդյունաբերությունը՝ 9,8 անգամ, սարքաշինությունը՝ 7,1 անգամ, հաստոցաշինությունն ու գործիքաշինությունը՝ 6,8 անգամ։

Նախատեսվում է 1959—1965 թվականների ընթացքում կառուցել և գործարկել մեքենաշինական և սարքաշինական 14 գործարան, ի թիվս որոնց կիսահաղորդիչային ուղղիչների, կատարողական մեխանիզմների, միկրոէլեկտրաշարժիչների գործարանները։

Մետաղահատ հաստոցների թողարկումը յոթնամյակում կավելանա 7 անգամ, առանձնապես կաճի հատուկ և մասնագիտացված հաստոցների արտադրությունը։

Կկառուցվեն Լենինականում՝ ներհատիչ և հղկող հաստոցների, Երևանում՝ ֆրեզերային, Կիրովականում՝ ճշգրիտ հաստոցների գործարանները։

Հետագա խոշոր զարգացում կունենան Երևանի էլեկտրամեքենաշինական և կաբելի, ինչպես նաև էլեկտրաճշգրիտ գործիքների և ապարատային գործարանները։

Յոթնամյակում կավելանա գունավոր մետաղների՝ պղնձի, այլումինի և նրանց գլանվածքների արտադրությունը։ 1962 թ. շահագործման կհանձնվի Ագարակի պղնձա-մոլիբդենային հանքավայրը իր հարստացուցիչ գործարանով։ Շահագործման կենթարկվի նոր հարստացուցիչ գործարանը Ախթալայի պոլիմետալիկ հանքավայրում։ Արմատական վերակառուցման կենթարկվի Ալավերդու պղնձաքիմիական կոմբինատը. այն կանցնի էլեկտրական վառարանների միջոցով պղնձի ձուլման և կոնտակտ եղանակով ծծմբաթթվի ստացման։ Բացի դրանից այստեղ կկազմակերպվի հազվագյուտ և ցրված էլեմենտների կորզումն մետալուրգիական փոշուց և այլ թափթփուկներից։

Կսկսվեն խոշոր աշխատանքներ Ախտալայում նեֆելինային սիենիթների կոմպլեքսային արդյունաբերական օգտագործման ուղղությամբ, որոնց պաշարները շրջանում անսպառ են։ Նեֆելինների վերամշակումից կստացվեն այլումինի արտադրության համար կավահող և դրան հարակից շատ ուրիշ արժեքավոր նյութեր՝ մետասիլիկատ նատրիում, մետասիլիկատ կալցիում, երևանիտ, պոտաշ, ցեմենտ և այլն։ Ախտալայի հանքաքիմիական կոմբինատի կառուցումը ռեսպուբլիկայի էկոնոմիկայի հետագա զարգացման համար խոշոր նշանակություն կունենա, քանի որ հանձին այդ կոմբինատի կստեղծվի արդյունաբերական մի նոր նշանակալից կենտրոն։

Զափազանց խոշոր զարգացում կստանա ռեսպուբլիկայի քիմիական արդյունաբերությունը։ Այդ ճյուղում ներդրվող կապիտալ միջոցները 6 անգամ կաճեն համեմատած անցած յոթնամյակի հետ։ Սինթետիկ կաուչուկի արտադրանքը գրեթե կկրկնապատկվի։ Ընդ որում այն կհիմնվի բնական մեթան գազից ացետիլենի ստացման վրա։ Հարակից կստացվեն մեծ քանակությամբ պոլիքլորվինիլային խեժեր։ Վերջինները որպես մեկուսիչներ լայնորեն կօգտագործվեն էլեկտրալարերի և կաբելների արտադրության մեջ։ Դա կնպաստի մեծ քանակությամբ գունավոր մետաղների խնայողության։

Պոլիքլորվինիլային խեժերի առկայությունը հնարավորություն կտա կազմակերպելու լինոլիումի, շինարարական դետալների, պարկետի, սանտեխնի-

կական սարքավորման, գալանտերիական առարկաների և տնային պիտույքների մեծ արտադրություն։

Ադրբեջանական ՍՍՌ-ի Ղարադաղ հանքավայրից մինչև Երևան գազատուղի առաջիկա կառուցումը արմատապես կփոխի Հայաստանի վառելիքի և էներգիայի բալանսը։ Կկառուցվեն երկու խոշոր ջերմային էլեկտրակայաններ։ Բացի դրանից, Ադրբեջանից դեպի Հայաստան անց կկացվի բարձր էլեկտրահաղորդման գիծ, որով Հայաստանը կստանա արդյունաբերության համար անհրաժեշտ մեծ քանակությամբ էլեկտրաէներգիա։ Ջերմային էլեկտրակայանների և բարձր էլեկտրահաղորդման գծի կառուցումը հնարավորություն կտա 1965 թ. դադարեցնել Սևանա լճից էներգետիկ նպատակներով ջրի բացթողումը։ Դա կօգնի լճի ջրերը պահպանել հնարավորին սահմաններում բարձր մակարդակի վրա։

Բացի ջերմային էլեկտրակայանների կառուցումից յոթնամյակում կավարտվի Սևան-Հրազդան սիստեմի Աթարբեկյանի և Երևանի հիդրոէլեկտրակայանի շինարարությունը։ Կսկսվի Որոտան գետի վրա Տաթևի խոշոր հիդրոէլեկտրակայանի շինարարությունը։

Հայաստանում առաջիկա յոթնամյակում հետագա զարգացում կստանան սննդի արդյունաբերությունը և ժողովրդական սպառման ապրանքների արդյունաբերությունը։ Արդյունաբերության այդ ճյուղերի արտադրանքը կաճի 1,7 անգամ։

Յոթնամյա պլանի հաջող իրագործումը չափազանց ուշագրավ կառուցվածքային փոփոխություններ կառաջացնի Հայաստանի արդյունաբերության մեջ։ Մեծապես կաճի մեքենաշինական, սարքաշինական, քիմիական և մետաղաձուլական արտադրանքի տեսակարար կշիռը։ Համապատասխանորեն կիջնի թեթև ու սննդի արդյունաբերության տեսակարար կշիռը, թեև արտադրության այդ ճյուղերի արտադրանքը բացարձակ առումով, ինչպես նշվեց, նույնպես զգալի չափով կավելանա։

Ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի և ամենից առաջ արդյունաբերության արագ զարգացումը ապահովելու համար 1959—1965 թթ. նախատեսվում է ներդնել Հայկական ՍՍՌ-ում 12 միլիարդ ռուբլի։ Այդ գումարը 2,2 անգամ գերազանցում է նախորդ յոթ տարիների ընթացքում ներդրված միջոցները։

* * *

Սույն հոդվածում բերած տվյալները, որքան էլ նրանք չոր, վիճակագրական բնույթի լինեն, այնուամենայնիվ վկայում են այն մասին, որ Սովետական Հայաստանի արդյունաբերության թե՛ ներկան, և թե՛ մանավանդ ապագան, հիրավի, հոյակապ է։

Շատ չի անցել այն օրից, երբ օտարության մեջ գեգերող հայ բանվորի կամ մտավորականի հոգին, եթե նա ընտրել էր արդյունաբերական գործունեությունը կամ նվիրաբերել իրեն ճշգրիտ գիտությանն ու տեխնիկային, երկատվում էր։ Մի կողմից նրան դեպի իրեն էին ձգում Մայր Հայաստանը, հայրենիքի վեհ պատմությունն ու անցյալի հարուստ կուլտուրան։ Մյուս կողմից նրան հայրենիքից վանում էր վերջինիս ծայր աստիճան աղքատ, տխուր կացությունը։ Այստեղ չկար աշխատանք բանվորի համար և տեխնիկական որոնումների ասպարեզ

ստեղծագործ ինժենների մտքի համար։ Եվ հայ մարդուն մնում էր ցրել իր ձեռքի ու մտքի մշակույթը ի հաճույս ուրիշների։

Հայ ժողովուրդը իր հայրենի տերիտորիայի վրա այժմ ոչ միայն ստեղծում է բավականաչափ մեծ նյութական արժեքներ, որոնք ապահովում են նրա անընդհատ աճող բարեկեցությունը, այլև գիտության, տեխնիկայի և կուլտուրայի ասպարեզում ցուցարերում է խիզախ, նորարար միտք։ Գիտության ու տեխնիկայի արտասովոր աճումը Սովետական Հայաստանում նախ և առաջ՝ միտի բացատրել արդյունաբերության արագ զարգացումով։

Արդյունաբերությունը ամբողջ Սովետական Միության, նույնպես և Սովետական Հայաստանի ազգային հարստության գերակշռող մասն է կազմում։ Մեր ռեսպուբլիկայում արդյունաբերության մեջ է ստեղծվում նյութական արժեքների երեք քառորդը։ Արդյունաբերական գործունեությունը, ներառյալ և արդյունաբերական շինարարությունը, մեր ռեսպուբլիկայի ազգաբնակչության մեծ մասի ապրուստի հուսալի աղբյուրն է։ Վճռական է արդյունաբերության ազդեցությունը ռեսպուբլիկայի գիտա-հետազոտական աշխատանքների ընթացքի վրա, թեև արդյունաբերությունն իր հերթին կրում է այդ աշխատանքների բարերար ազդեցությունը։ Նույնը կարելի է ասել լուսավորության, արվեստի ու գրականության մասին։

Արդյունաբերության վճռական նշանակությունը մեր կյանքի բոլոր բնագավառներում անվիճելի է։ Ահա ինչու սովետական ժողովուրդը մեծ խանդավառությամբ է ընդունում Կոմունիստական պարտիայի նախագծումները արդյունաբերության զարգացման ասպարեզում, հատկապես առաջիկա յոթ տարիների ընթացքում։

ПРОМЫШЛЕННОЕ РАЗВИТИЕ СОВЕТСКОЙ АРМЕНИИ

А. К. ДЖАГАЦПАНЯН

(Резюме)

В статье исследуется вопрос о промышленном развитии Армянской ССР, как воплощение в жизнь, в конкретных условиях республики, ленинского плана индустриального преобразования СССР. На основе конкретных данных освещаются этапы развития промышленности республики, структурные изменения, происшедшие в ней, место промышленности Армянской ССР в общесоюзном разделении труда в настоящее время и в ближайшей перспективе.

В статье показано, как в результате Октябрьской революции и проведения ленинской национальной политики прежде разоренная, измученная войнами, экономически отсталая Армения, которой, как лучший удел, предвещали аграрную будущность, в короткий исторический срок, с помощью братских народов Советского Союза, стала цветущей, передовой, индустриальной страной с развитым сельским хозяйством.